



Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

Ը • ՔԱՐՈՉ

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ՍՐԲՈՅ ԱԻԵՏ. ՈՐ ԸՍՏ ՂՈՒԿ.

(ԳԼ. Թ. 1—27):

- 1. «Եւ կոչեցեալ զերկոտասան առաքեալսն» եւս նոցա զօրութիւն և իշխանութիւն ի վերայ ամենայն դիւաց, և բժշկել ըզհիւանդութիւնս: 2. Եւ սռաքեաց զնոսա քարոզել զարքայութիւնն Աստուծոյ, և բժշկել զախտաժէտս: 3. Եւ ասէ զնոսա մի ինչ բառնայք ի ճանապարհ, մի գաւազան, և մի մախաղ, մի հաց և մի արծաթ. մի երկուս հանգերձս ունիցիք: 4. Եւ

յոր տուն մտանիցէք, անդ ագջիք, և անտի գնայցէք: 5. Եւ որք ոչ ընդունիցին զձեզ, յորժամ ելանիցէք ի քաղաքէն յայնմանէ, զփոշի ոտից ձերոց թօթախեալիք ի վկայութիւն նոցա: 6. Եւ ելեալ շրջէին ընդ քաղաքս և ընդ գեղս, աւետարանէին և բժշկէին ընդ ամենայն տեղիս: 7. Լուաւ Հերովդէս չորրորդապետ զգործսն ամենայն, և զարմանայր վասն ասելոյն յոմանց, 8. Եթէ Յովհաննէս յարեաւ ի մեռելոց, և յոմանց՝ թէ եղիա յայտնեցաւ, և յայլոց՝ թէ մարգարէ ոմն յառաջնոցն յարեաւ: 9. Ասէ Հերովդէս. զՅովհաննէս ես գլխատեցի. իսկ սա՞ ո՞վ իցէ, զորմէ այսպիսի իրս լսեմ: Եւ խնդրէր տեսանել զնա: 10. Դարձան առաքեալքն, և պատմեցին նմա զամենայն զոր արարին: Եւ առեալ զնոսա, խուսեաց առանձինն ի տեղի անապատ քաղաքի միոյ, որում անուն էր Բեթսայիդայ: 11. Եւ ժողովուրդքն իբրև գիտացին, գնացին զհետ նորա, և ընկալեալ զնոսա, խօսէր ընդ նոսա վասն արքայութեան Աստուծոյ. և որոց պէտք էին բժշկութեան՝ բժշկէր:

12. «Եւ օրն սկսաւ տարաժամել. մատեան երկոտասանքն և ասեն ցնա. Արձակեա զժողովուրդսդ, զի երթեալ շուրջ ի գեղսրն և յազարակս հանգիցեն, և գտցեն կերակուր. զի աստ յանապատի տեղոջ եմք: 13. Ասէ ցնոսա. Դուք տուք զոցա ուտել, և նորա ասեն. Ոչ գոյ մեր աւելի քան զհինգ նկանակ, և զերկուս ձկունս, բայց եթէ երթիցուք գնեսցուք բաւական ժողովրդեանդ կերակուր: 14. Քանզի էին արք իբրև հինգ հազար: Ասէ ցաշակերտսն, Բազմեցուցէք զզոսա, զասս գասս, յիսուն յիսուն: 15. Եւ արարին այնպէս, և բազմեցուցին զամենեսեան: 16. Եւ առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն, հայեցաւ յերկինս, օրհնեաց և եբեկ, և տայր ցաշակերտսն՝ արկանել ժողովրդեանն: 17. Կերան և յագեցան ամենեքեան, և բարձին զնշխարս կոտորոցն՝ երկոտասան սակառի:

18. «Եւ եղև ի կալն նորա յաղօթս՝ առանձինն, էին ընդ նմա և աշակերտքն նորա, եհարց զնոսա, և ասէ. Զո՞ որ ասեն զինէն ժողովուրդքն՝ թէ իցեմ: 19. Եւ նոցա պատասխանի արեալ, ասեն. ԶՅովհաննէս մկրտիչ, և այլք՝ զեղիա, իսկ այլք՝

Թէ մարգարէ որ յառաջնոցն յարեալ: 20. Ասէ ցնոսա. Գուք՝  
 զո՛վ ասէք զինէն՝ Թէ իցեմ: Պատասխանի ետ Պետրոս, և ասէ.  
 ԶՔրիստոսն Աստուծոյ: 21. Նա սաստեաց ի նոսա, և պատուի-  
 րեաց՝ Մի ումեք ասել զայն: 22. Եւ ասէ. Թէ պարտ է Որդւոյ  
 մարդոյ բազում չարչարել, և անարգել ի քահանայապետից և  
 ի ծերոց և ի դպրաց, և սպանանել, և յերիր աւուր յառնել:  
 23. Եւ ասէր առ ամենեսին. եթէ որ կամի զկնի գալ, ու-  
 բացի զանձն, և առցէ զխաչ իւր հանապաղ. և եկեսցէ զհետ  
 իմ: Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել, կորուսցէ զնա. և  
 որ կորուսցէ զանձն իւր վասն իմ, կեցուսցէ զնա: 25. Զի՞նչ  
 օգուտ է մարդոյ, եթէ զաշխարհ շահեսցի, և զանձն իւր կո-  
 րուսցէ կամ տուժեսցի: 26. Զի որ ամօթ համարեսցի զիս և  
 զբանս իմ, զնա և Որդի մարդոյ յամօթ արասցէ՝ յորժամ գայ-  
 ցէ փառօք իւրովք և Հօր, և հրեշտակաց սրբոց:

Սուրբ Աւետարանի այս ընթերցուածը՝ նախորդ է. տետրում զետե-  
 ղուած ընթերցուածք շարայարութիւնն է. որը վերջացաւ Յայրոս իշխանի  
 այն ինչ մեռած աղջիկն կենդանացնելու պատմութեամբն: Այժմ՝ մտա-  
 դրութեամբ լսենք և այս ընթերցուածի թարգմանութիւնն, ու բովան-  
 դակած իմաստն՝ որ նկարագիրն է Աստուծոյ առատազեղ խնամոց:

1. « Եւ ինչեց երկուորոսն առաւելելն, և նոցա՝ զբարեմտեան և իշխանութեան  
 որոսոս յան զեւերս վերայ. (բարեմտեան) և հիստորիաները բնական: »

Գրեթէ մի տարի իւր հետ շրջեցոյց երկոտասան առաքեալները, նոցա  
 ներկայութեամբը կքարոզէր և կուսուցանէր Աստուծոյ արքայութիւնն, և  
 աւետիս կուտար, թէ այլ ևս հասել է Աստուծոյ արքայութիւնը. նոցա  
 ներկայութեամբ վարդապետեց Աստուծոյ արքայութեան որդւոց բարոյա-  
 կանն. վարդապետեց քրիստոնէական առաքինութիւնն—ընկերսիրութիւն  
 առհասարակ կամ մարդասիրութիւն. այնպէս որ մինչև իսկ ատելին,  
 թշնամին և հալածիչն սիրել՝ պարտականութիւն դրաւ, որ ընդհանուր  
 պայմանն է Աստուծոյ արքայութեան մէջ ապրել ցանկացող ժողովրդեան:  
 Նոցա ներկայութեամբ պիղծ այսերն ու չար դեերն հանեց մարդիկներէ,  
 ամեն տեսակ հիւանդներ բժշկեց՝ հաստատուն հաւատոց ներգործութեամբ.  
 կոյրեր լուսաւորեց, կաղեր գնացուց, մեռելներ կանչեց և կանգնեցուց,  
 Եւ այժմ միւսնոյն աստուածային իշխանութիւն կուտայ տասներկու առա-  
 քեալներուն, իշխանութիւն՝ ամեն դեերու վերայ, որոնք պէսպէս մեղ-  
 քերու պատճառաւ կմտնեն մարդկանց մէջ և կրնակին չարչարելով զնոսա.  
 իշխանութիւն տուաւ և հիւանդութիւններ բժշկելու: Որպէս զի նոքա

ևս բժշկեն. որուն կարօտեալները՝ խիստ շատ էին ամեն կողմերումն և մինչև իսկ հաց ուտելու ժամանակ չէին թողուր: Այս իշխանութիւն կուտայ՝ Աստուծոյ արքայութեան որդւոց բարոյականն ու պարտաւորիչ առաքինութիւններն ուսուցանելէ ետքը միայն: Աշխարհիս բժիշկներն՝ իրենց աշակերտներուն կուսուցանեն նախ անդամահատութիւն, պէս պէս դեղերու և խառնուրդներու գործածութիւն, և ապա թոյլ կուտան բժշկելու: Իսկ Փրկիչը՝ փոխանակ անդամահատութեան՝ կուսուցանէ ուղիղ բարոյական և ճշմարիտ առաքինութիւն, և փոխանակ դեղերու՝ կուսուցանէ աներկբայ հաւատք, թէ Աստուծոյ և Աստուծոյ և խորհրդի հոգով և որով ինքրդին՝ ինքոյ նորա ինքրոսածին, մայն թէ աներկբայ հոգով ինքրեն: Եւ ապա իշխանութիւն և իրաւունք կուտայ նոցա հանել ամեն դէներն, և բժշկել ամեն հիւանդութիւններն:

2. « Եւ իբրև զնորա որ Աստուծոյ որոյնքն ինքն ինքն և ինքնապէս ինքն » :

Բժշկութեան իշխանութիւն տալը՝ կնշանակէր թէ առաքեալներն արդէն սորվել էին Աստուծոյ արքայութեան քարոզն, այսինքն՝ այն ճանապարհն կամ բարոյականն, որով մարդիկ Աստուծոյ արքայութեան մէջ պիտի ապրէին, նորա օրէնքով պիտի ապրէին այս աշխարհումն, որով և յաւիտենական կենաց մէջ ևս պիտի թագաւորէին. վասն որոյ և խրկած ժամանակը կպատուիրէ. որ Աստուծոյ արքայութիւնը քարոզեն նախ, և այն աւետիսն ընդունողներուն մէջ գտնուած ամեն հիւանդութիւններն ու ախտերը բժշկեն. որ մի ազատոյց է թէ Աստուծոյ արքայութեան բարոյական օրէնքներովն ապրող մարդիկ՝ հիւանդութիւն պիտի չունենան: Այս մասին բացայայտ կերպով կգրէ Սողովմոն իւր հոգեշունչ գրուածքներումն. « Մահի մի ցանկայք, որ կուգայ ձեր կեանքը մոլորցնելով և « ձեր ձեռքի գործերովն՝ սատակում մի բերէք ձեր անձերուն, Աստուծոյ « զի Աստուած՝ մահ չգրաւ և ո՛չ՝ կենդանիներու կորսուածին վերայ կու « բախանայ, Բանգի ամենն հաստատեց, որ կեանք ունենան. և աշխարհի « գործերն՝ այսինքն բերքերն՝ փրկութեան համար են. նոցա մէջ սատա « կեցնող դեղ չկայ. և ո՛չ՝ գերեզմանի թագաւորութիւն կայ երկրի վերայ. « վասն զի արդարութիւնն՝ անմահ է: Իսկ ամբարիշտներն (Աստուծոյ չը « հնազանդողներն) իրենց հրաւիրեցին զնա (գերեզմանի թագաւորու « թիւնն)՝ իրենց խօսքովն ու գործովն բարեկամ համարեցին զնա, և « հաշտեցան. և դաշինք դրին նորա հետ. վասն զի հէնց արժանի են նո « րան բաժանակից լինելու » : (Իմաստ. Ա. 12—16), Փրկչին ուսուցած և ուսուցանել պատուիրած բարոյականն՝ այս նկարագրուած անմահ ար « դարութեան բարոյականն է:

5. « Եւ տոաց նոցա ճանապարհի համար ոչինչ բան մի վերցնէի, ո՛չ բառաւան, ո՛չ մակաղ, ո՛չ հաց, և ո՛չ բրձաւ: ո՛չ երկու հանդերձ »:

Կիրկէ առաքեալներն և կապտուիրէ: որ ոչինչ չվերցնեն հետերնին, որ ասել է: Թէ օտար տեղ չխրկէր, իրմէն չհեռացնէր. կամ լաւ ևս ասել ինքն ևս նոցա հետ է. ինչպէս որ կղնային իրեն հետ, և գաւազան չունէին, նոյնպէս դարձեալ չունենան. վասն զի գնալու ճանապարհումն ո՛չ պիտի յոգնին, և ո՛չ շուն պիտի հաջէ իրենց վերայ: Եւ մաղախ չունենան, վասն զի արդարութեան որդիքն բեռնակիր չեն, և շալակելու բեռն պիտի չունենան. և ո՛չ հաց ունենան, վասն զի պիտի չքաղցնեն. և եթէ գործեն, ըստ արդարութեան՝ իրենց մշակութեան չափովն ուտելիք պիտի արժեն ամեն տեղ, Եւ ո՛չ արծաթ ունենան. վասն զի աշխարհիս թագաւորութեան գործակալները չեն, և ո՛չ նորան հարկատու: Եւ ո՛չ երկու հանդերձ ունենան, վասն զի երբէք դուրսը պիտի չմնան, որ մի գուցէ մրսն. և մի հանդերձն բաւական է մարդկային մերկութիւնը ծածկելու. աւելորդ հանդերձը՝ կարճամիտ մարդուն բեռնակիր կդարձնէ: Այս պատուէրները կ'իշխենքնին անշուշտ Իսրայէլի ելքն Եգիպտոսէն, և անպատուէրները թափառելն քառասուն տարի. որոց ոչ կ'օշիկն մաշեցաւ և ո՛չ հալաւն. և հաց ունեցան երկինքէն՝ ուր որ գետինը չէր արդինաբերէր, քուր ունեցան քարաժայռէն՝ ուր որ աղբիւրներ չէին ոռոգէր: Արդարութեան քարոզիչն՝ ուր որ գնայ կընդունուի. ըստ որում ամեն տեղ կան և կգտնուին Աստուծոյ արդարներն. որոնք եթէ մոլորուած ևս են, միշտ զԱստուած կ'ինդրեն: Այսպէս կիրկէ Փրկիչն իւր աշակերտներուն, իբրև թէ գնալիք տեղերն՝ իրենց սեպհական տները լինին, այնպէս կապտուիրէ. որ ի՞նչ և չունենան (Մատ. Ժ. 10): Յաշխարհ ծնող երեխաներն՝ ճիշդ այսպէս անպատրաստ կուգան, անմեղ ու արդար. և նոցա ամեն պիտոյքն կ'հոգացուի ըստ տեղւոյն:

4. « Եւ ո՛ր քան որ մտնէի, այնքալ հանքիցեի, և այնքալ էն գնացեի »:

Որպէս թէ իրենց տունն գնացած լինին, այնպէս վերաբերուել կապտուիրէ մնալ այն տունը. քանի որ այն գիւղումն կամ քաղաքումն են. և ելլեն այն տնէն, երբ որ այն գիւղէն կամ քաղաքէն գնալու լինին. Հապա որ ընդունող տանուտէրն չընդունի միշտ, և ճանապարհ ցոյց տայ՝ այն ժամանակն ինչ պիտի անեն, ուրիշ մի հիւրընկալի տունն պիտի չըմտնեն: Այս հարցմանն ինքնին կապտասխանէ Տէրն իւր պատուէրն շարունակելով այսպէս:

5. « Եւ որոնք որ չընդունին շինել, երբ որ այն տունէն ելլէի, յեր որտեղում գնայի և ինքուրեցեի նոյն վայտալեան համար »:

Այս պատուէրն կուտայ չընդունող ժողովրդեան հետ վարուելու համար. այսինքն հեռանալ այն քաղաքէն կամ գիւղէն, և ոչինչ չընդունել

նոցամէն. մինչև անգամ իրենց ոտքերուն կպած փոշին թօթուել այնտեղ, և հետերնին չտանել. որպէս զի պարզապէս վկայած լինին նոցա, թէ առաքեալներն գնացին այնտեղ ո՛չ այն նպատակաւ, որ մի որ և է նիւթական շահ վերցնեն նոցամէն, այլ մանաւանդ թէ նոցա պիտի շահեցնէին Աստուծոյ արքայութեան ճանապարհն ուսուցանելով. հիւանդնին բժըշկելով, բորոտնին սրբելով, չար և պիղծ այսերն՝ հալածելով, և այս ամենն ճրի պիտի անէին նոցա. Արդարեւ՝ անձին շահին համար շրջողն տնէ տուն կփոխուի, եթէ հիւրընկալ չգտնէ, տուն կվարձէ, կամ կգնէ, և իւր շահուն համար կշարունակէ այլ ևս կենալ. բայց եթէ խրկուածն՝ իւր շահն չունի, և միայն օգուտ ու բարիք պիտի լինի՝ որոնց որ գնացել է, այսպիսի առաքեալին պատշաճ չէ տնէ տուն փոխուել, կամ բռնի կերպով մնալ, ուր որ չեն կամիր ընդունել, Փրկիչն ինքն կշրջէր քաղաքէ քաղաք և գեղէ գեղ անցնելով և ամեն տեղ կընդունուէր. մանաւանդ թէ եղած տեղն եթէ լսէին, ամեն կողմերէն այնտեղ կթափէին կոյրեր, հիւանդներ, անգամալոյծներ, այսահարներ, և միջոց չէին գտներ նորան մօտ հասնելու. մինչև իսկ տան առաստաղն կքանդէին. և այս խոնուած բազմութիւնն՝ մի քաղաքի կամ գիւղի ժողովուրդ չէր, այլ ամբողջ գաւառի, շուրջ գաւառներու, ամբողջ Հրէաստանի և Գալիլիայի կուսակալութիւններէն. այս մի և նոյն ժողովուրդներուն կխրկէր իւր աշակերտներն, որոնք վարդապետն ընդունելու և տեսնելու ըղձակաթ էին, Բայց ինչպէս Գերգեսացոց սահմաններումն աղաչեցին, որ գնայ իրենց սահմաններէն, նոյնպէս կարող էր և առաքելոց պատահել այնպիսի գիւղ կամ քաղաք, որ չընդունէին, և ճանապարհ ցոյց տային. որոց այս հրահանգն կպատուիրէ. գիտցնել միայն, թէ առաքեալներն եկած են օգուտ տալու ամենուն, և ոչ թէ օգուտ քաղելու:

6. « Եւ եւտն, կշրջին քաղաքս և գիւղս (անցնելով). Իստորանէն և կթշկէին «մէն քիւղերոս»:

Հնազանդեցան առաքեալներն, և ելան շրջեցան Հրէից տասներկու ազգերուն մէջ, կաւետարանէին Աստուծոյ արքայութիւնն, ինչպէս որ վարդապետն Յիսուս կաւետարանէր, կուսուցանէին ճշմարիտ արդարութիւնն, — ընդհանուր ընկերսիրութիւն, անխակալութիւն, հեղութիւն, չարին չար չհատուցանել, այլ Աստուծոյ արքայութիւնն ու արդարութիւնն խնդրել, Միևնոյն ժամանակ և հիւանդներն ու ախտաւորներն կբժշկէին, դեւերն կհանէին. ամեն տեղ զգալի կանէին, թէ Աստուծոյ արքայութիւնն մօտեցել է. «նա մեր հիւանդութիւններն վերցուց, և մեր ցաւերն իւր վերայ առաւ» (Եսայի): Առաքեալներն ևս կբժշկէին առանց դեղերու, այլ միայն ձեռք կգնէին հիւանդներուն վերայ՝ ինչպէս որ Փրկիչն կանէր. այսինքն մատը՝ խուլին ականջը կկոխէր, և բացուել կհրամայէր, համբին

լեզուէն կրօնէր, ու նոյնպէս բացուել կհրամայէր. ձեռքը՝ կոյրին աչքին վերայ կգնէր, և նայել կհրամայէր. բորոտին կերկնցնէր, և սրուել կհրամայէր. Այս կերպով կրժշկէին և առաքեալներն, և ինչպէս կյիշէ Մարկոս աւետարանիչն՝ իւզով կօծէին երբեմն. Թերևս վէրք ունեցող հիւանդներն միայն կօծէին. Այս իւղն կգործածէին՝ ո՛չ ինչպէս արդի բժիշկներուն զեղ գործածելն, այլ ինչպէս որ երբեմն Փրկիչն թքեց մի խուլի ահանջին մէջ, և կոյրի՝ աչքին. (Մարկ. Է. 33. Ը. 23): Թերևս աչքին վերայ ցամաքած ճիւղն և ահանջումն ամրացած կեղան կակղեցնելու համար թքեց. Աերջապէս՝ ինչպէս Փրկիչն կհրամայէր, և հիւանդներն կրժշկուին նոյնպէս և աշակերտներուն խօսքովն կրժշկուէին, զի իշխանութիւնն՝ Փրկչէն տրուած էր. Առաքելոց քարոզութեան և նոցա ձեռքով կատարուած սքանչելի բժշկութիւններու համբաւն ևս հռչակուեցաւ, և այս՝ Հրէից երկոտասան ազգերու երկիրներումն միանգամայն. Եւ այս համբաւն՝ աւելի ևս տարածեց Փրկչին համբաւն, և այնուհետև գունդադուռ կուգային ամեն կողմերէն. Վասն զի առաքեալներն՝ Փրկչին անունովն կհանէին դեւերն, և նորա անունովն կրժշկէին ամեն տեսակ հիւանդներն. Փրկչին համբաւն՝ այսպէս հասաւ մինչև իսկ Հերովդէս չորրորդապետի արքունիքն:

7. « Ընդհանրապէս լինելու այն տեսիլներն, և կարգաւորումն, որոնց առիւթն՝ թէ՛ Յովհաննէս Մկրտչին յարմարեալ տեսիլներն. և որոնց առիւթն՝ թէ՛ Եղիան Երևեցող, և որոնց տեսիլներն՝ թէ՛ Կարգաւորումն (Սարգսիւններն) մի արքայի յարմարեալ տեսիլներն: »

Առաքելոց գործած սքանչելիքներն տեսնող ժողովուրդն իմացան՝ թէ Յիսուս նազովրեցւոյ ուսուցած վարդապետութիւնն կքարոզեն, և նորա անուան զօրութիւնովն այն սքանչելիքներն կգործեն. և հետաքրքիր եղան լսելու թէ ո՞վ է Յիսուս, ուստի է, և ո՛ր է. Առաքելոց պատասխաններովն չբաւականացող ժողովուրդն՝ որոնք որ Սուրբ Գրոց մարգարէականներուն հմուտ էին. Մեսիայէն յառաջ գալիք մարգարէներուն կնամայնէին. այսպէս կհետեցնէին, թէ Յիսուս Եղիա մարգարէն է, որուն համար Մաղաքիայի գուշակութիւններումն կայ, թէ պիտի գայ տիրոջ առջևէն. Եւ ոմանք՝ որ Յովհաննէս Մկրտչի քարոզութիւնն լսել էին. և նորա վկայութեանն՝ թէ « Զեմ ես Քրիստոսն, այլ թէ առաքեալ եմ առաջի նորա » կհաւատային, այս կարգի ժողովուրդն ևս լսելով Յիսուսի գործերն, կասէին. թէ Ինքն Յովհաննէս Մկրտչին է, յարութիւն է առել մեռելներէն. Իսկ ուրիշ մի կարգ մարդիկ, որոնք մարգարէական կանխագուշակութեանցն հմուտ չեն. կհամարին, թէ հին մարգարէներէն մին յարութիւն առած լինի, և այն սքանչելիքներն կատարէ. Իսկ Հերովդէս՝ աւելի խոր կմտածէ, թէ Սա՛ ո՞վ պիտի լինի. արդեօք Հերովդէս

մեծի օրերումն արևելից մոգերու բերանովն խօսուած « Լրէից թագաւորն » է, որ նոր արքայութիւն կ.քարոզէ. կզարմանար Լերովդէս, մտածելով:

« 9. « Առաջ Լերովդէս 23 լրտնէր՝ եւ գլխաւորեցի. ինչ որ ո՞վ էր, զորսն այսպէս էր լրտն. . . » :

Լերովդէս՝ հաստատ գիտեր, թէ Յովհաննէս զլիսատուած է, և նա չէ կարող լինել. և այն կարծիքներուն, թէ Եղիան է, կամ հին մարգարէներէն մին է, կարևորութիւն չէր տար. վասն զի իշխան աշխարհի էր և աստուածային պատգամներուն չէր հաւատար. բայց այսպիսի սքանչելիքներ գործածին կզարմանար: « Եւ կէսուէր, որ ունէր զնա » կասէ աւետարանիչն. այս տեսնելու հետաքրքրութիւնն՝ երկու նպասակ ունէր, եթէ Յովհաննէս Մկրտիչն էր, պիտի ճանաչէր. իսկ եթէ Յովհաննէս չէր, պիտի կարծէր, թէ արքայն է, զոր Լերովդէս մեծն մահացնել խորհած էր և Բեթղէհէմի մանուկներն կոտորել տուել էր, բայց միևնոյն ժամանակ տարակուսած ևս էր, վասն զի երկու տարի ետքն կոտորածն եղաւ, և կկասկածէր թէ թերևս այն նորածին արքայն զերծուցին կոտորածն. այս միևնոյն տարակոյսն ունեցաւ և Լերովդէս չօրրորդապիտ. և մտադիր էր՝ որ տեսնէր. թերևս և սպաննել կխորհէր, Լերովդէս չկարողացաւ տեսնել զՅիսուս, մինչև որ չարչարանաց օրն կապած՝ իրեն խրկեց Պիղատոս. որ շատ ջանաց խօսեցնել զՅիսուս, բայց նա իսպառ լռեց. և մարգարէի գուշակութիւնն ճշգիւ կատարուեցաւ: Մանկութեան ժամանակն՝ կոտորածէ ազատուող Էմմանուէլն՝ զերծաւ նա և քարոզութեան ժամանակ՝ երբ Գալիլիայի սահմաններումն մահուան ստուերներումն նստած ժողովուրդներուն լոյս կծագէր:

« 10. « Առաւելեալն՝ դարձան և մէն արձնին պարսեցին նա: Եւ ուրաշխան էր իսրայէլից աստուծոն՝ զի տեսարար եղաւ (որ կոտորածէր) զի +աշտի: Երան անուն իւրեւորեց էր » :

Առաքեալներն պատմեցին՝ ինչ որ գործեցին տասներկու ազգերուն գաւառներումն: Արմէ յետոյ հեռացաւ Փրկիչն, դէպ յանապատ, աշակերտներն ևս տարաւ: Այսպէս շատ անգամ կ.քաշուէր Փրկիչն և կառանձնանար, որով միջոց կուտար ժողովրդեան՝ որ լսածնուն վերայ խորհին, և նոյն բարոյական օրէնքն՝ ինչ որ կպատուիրէր՝ սկսին կատարել իրենց օրերումն, մինչև փորձով տեսնեն և հասկանան, թէ իսկապէս խաղաղութիւն բերող են այն օրէնքներն, սրտի խաղաղութիւն բերող, զոր Տէրն կխոստանար. և ո՞չ թէ աշխարհիս հարստութեան և փառաց հեշտութիւններն, որոնք միանգամայն կխռովեն հոգւոյ խաղաղութիւնն: Այսպէս կառանձնանար Փրկիչն՝ և աշակերտներուն վարժեցնելու համար. ըստ որում անապատի միայնութիւնն՝ մի առանձին տպաւորութիւն ունի, և կազդէ

մարդուն, թէ ամեն մարդ իւր ընկերն է, և ցանկալի է ընկեր ունենալ: Անապատական կեանքն՝ զգալի կանէ ընկերութեան քաղցրութիւնն ու կարևորութիւնն, որով միայն կարող է տգէտ ընկերն՝ ուսանել փորձառու ընկերներէն, գիտուն ընկերներէն, իսկ փորձառու և գիտուն ընկերն՝ կարող է ուսուցանել անգէտին, խօսակցել հմուտին, զուարճանալ և զուարճացնել հաւասար խաղաղասիրութեան միջոցին:

Այսպէս առանձնանալով կգիտէր Փրկիչն և ժողովուրդներու հոգին, թէ ինչպէս կ'մնտոեն զինքն. նաև իւր հակառակորդներուն միջոց կուտար հանգարտելու, որպէս զի կարողանան Աստուծոյ պատգամներուն իմաստից խորն թափանցել, մինչև որ Աստուծոյ Քրիստոսին համար տրուած նշաններն զգան, և դառնան ընդունին զՔրիստոս. այս մտքով ևս նոցա իրաւունք կուտար Յիսուս, և կասէր. Քննեցէք Մովսիսի գրքերն, զորս եթէ քննէին, Մովսիսի տուած նշաններէն պիտի հասկանային. թէ Սա՛ Մովսիսի գուշակած մարգարէն է. ըստ որում՝ կասէ Մովսէս. « Եւ մարդ՝ որ ոչ լուիցէ զոր խօսիցի մարգարէն յանուն իմ, ես խնդրեցից զվրէժ ի նմանէ: Բայց՝ մարգարէն՝ եթէ ամբարշտեցի խօսել յանուն իմ՝ բան ինչ՝ զոր ես ոչ հրամայեցի խօսել, և կամ թէ խօսիցի յանուն աստուածոց օտարաց, մեռցի մարգարէն այն (քարկոծեցէք): Ապա թէ ասիցէք ի սրտի. զիմօր գիտացուք զբանն՝ զոր ոչ խօսեցաւ Տէր:— Զոր ինչ խօսիցի մարգարէն յանուն Տեառն, և ո՛չ լինիցի բանն և ո՛չ զիպիցի, այն բան է, զոր ո՛չ խօսեցաւ Տէր: Ամբարշտութեամբ խօսեցաւ մարգարէն. մի թողուցուք նմա» (Բ. օրէնք. ԺԸ. 20—22): Փարիսեցիներն և դպիրներն՝ եթէ Մովսիսի այս գուշակութիւնն կարդացած լինէին, Պրոպատիկէի անդամալուծին բժշկութեան մասին բնաւ պիտի չհակառակէին Փրկչին այլ պիտի ճանաչէին, թէ Սա է Մովսիսի գուշակած մարգարէն. ըստ որում Յիսուսի խօսած խօսքերն ամենն կկատարուէին. անդամալուծին կասէր « Ե՛լ, վերցուր մահիճդ, և գնա », և այնպէս կկատարուէր: Փրկիչն՝ այսպիսի քննութեանց միջոց կուտար և քահանայապետներուն և Փարիսեցիներուն և դպիրներուն. որպէս զի ճանաչեն Աստուծոյ Օծեալն, Այսպէս գործնական մի օրինակ ևս կուտար առաքելոց, որ երկար քարոզութենէ ետքն առանձնանան անապատանան, և այն հանդարտութեան մէջ խելամուտ լինին իրենց գործածին, և թէ ինչ հետևանքի պիտի հասնին. նոյնպէս և առանձնութեամբ՝ ազօթքով զիմեն առ Աստուած և նորա աջն խնդրեն, որ զօրավիգն լինի իրենց ուսուցչութեան պաշտօնումն, և Հոգւոյն Սրբոյ շնորհիւն զօրանան և պրտադարձեր լինին, Միևնոյն ժամանակ և Հերովդէսի նման խորհող աշխարհի իշխաններէն խուսափեն և հետի լինին:

և ինչ-էր նոցա գէտ Աստուծոյ արդարութեան մասն. և բռնութեան պէտք ունեցողներն իբրև իբր»:

Փրկչին գնալուն և ժողովորդեան՝ նորա ետեւէն գնալուն հանգամանքներն ևս կահնարկէ Մարկոս աւետարանիչ ըստ այսմ. «Եւ նաւով գնացին «մի անապատ տեղ առանձինն: Եւ տեսան զնոսա, որ կերթային, և շատերն իմացան (ուր գնացածնին): Հետեւակաց կգնային այն տեղ ամեն «քաղաքներէն խուռն բաղմութեամբ, և կմտնենային նոցա: Եւ ելաւ տեսաւ շատ բաղմութիւն, և գթացաւ նոցա վերայ, զասն զի նման էին հոս «վիւ չունեցող ոչխարներու: Եւ սկսեց սորվեցնել շատ» (Զ. 32—34): Այսպէս եռանդով կրիմէ ժողովուրդն՝ նաւով գնացող Փրկչին ետեւէն, առանց բնաւ զգալու ճանապարհի երկայնութիւնն: Փրկչին հեռիէն կտեսնէ նոցա եռանդն ու տագնապն. զոր առանց զգալու՝ կանցնին Աստուծոյ նաւով մինչև ի Բեթսայիդայ՝ ցամաքի ճանախարհով: որոնզմէ ոմանք հետերնին հիւանդներ ևս ունէին: Փրկչին՝ ինչ որ նոքա կսպասէին, անկէ աւելին կուսուցանէ նոցա. կուսուցանէ Աստուծոյ արքայութիւնն—Աստուած է թագաւոր բոլոր տիեզերքին. վասն զի՝ նա կխնամէ ամեն կենդանիներն՝ ջուր և կերակուր տալով, բնութեան օրէնքն իւր սահմանումն պահելով: Աստուած է թագաւոր մարդկան, որ տէր կարգեց զմարդ՝ աշխարհիս բոլոր կենդանութեան և ամեն բարի վայելչութիւններուն: Աստուծոյ արքայութեան արդարութիւնն ու իրաւունքն չպահող մարդն՝ ինչպէս ստութեան հօր սատանայի ձեռքն, և հիւանդացաւ մեռաւ, և ամեն տեսակ զրկանքներ սկսեց գործել ինքն իրեն: Աստուծոյ արքայութիւնն խնդրող ժողովուրդն միայն կկերծանի այս չարիքներէն: ուղղելով իւր ճանապարհն ընդհանուր ընկերսիրութեան, բարեգործութեան և ճշմարտութեան շաւիղներումն: Մանր մանր ցոյց կուտար Աստուծոյ շնորհքն ու պարգևներն առ մարդ, և եթէ մարդն է, որ կղրկէ իւր ընկերներն Աստուծոյ բարիքներէն, նայել կուտար երկնքի թուշնոց. թէ ինչպէս կապրին Աստուծոյ խնամքովն՝ առանց վարելու, ցանելու, հնձելու և ամբար գնելու: Եւ թէ Աստուծոյ ողորմութիւնն՝ անչափ կպատրաստէ մարդկային սննդեան բարիքներն, ինչպէս աղբիւրներն կբղխեն անսպառ բլրխումներով:

Եւ այս ուսուցման հետ, հաւատով խնդրողներուն հիւանդութիւններն ևս կվերցնէր, և կապացուցանէր, թէ Աստուած՝ մահ սահմանած չէ, մարդիկներովն կհիւանդանան և կմեռնեն: Եւ թէ Քրիստոս պիտի յարուցանէ դարձեալ ի կեանսն յաւիտենից, և Աստուծոյ արքայութեան ժառանգ պիտի կացուցանէ, եթէ միայն ընդունին զնա, և նորա ուսուցած վարդապետութեան ճշմարտութիւնն պահեն. նոյն ճշմարտութիւնն պիտի ազատէ զնոսա և այս աշխարհի տառապանքներէն:

12. « Եւ որն ուրեց վերջին ժամերան հասնելու մտ էլան որաներդուներն, և ստացին նորան. Արդևի՛ց այդ ժողովուրդներն, որ տու խոշի գեղերն և արարութիւն գնան հանգչին, և կերակուր գտնեն. լաւն զի այդտեղ ունչին որդեա՛ ինքն »:

Փրկիչն կխօսի Աստուծոյ արքայութեան մասին. և քաղցած ժողովուրդն կլսէ անյագ, առանց անգամ զգալու՝ թէ քաղցած են. մինչև աշակերտներն ևս կքաղցենան և կյիշեցնեն Փրկչին, որ արձակէ զնոսա, որ գնան հանգչին և կերակուր գտնեն. Բայց Փրկիչն արդէն իսկ Աստուծոյ արքայութիւնն ուսուցանելով՝ կդատապարտէր աշխարհիս կարծիքն, որ կհհամարէին, թէ մարդ՝ միայն կերակուրով կսնանի. և կուսուցանէր, թէ « Կարդ՝ միայն հացով չապրիր. այլ Աստուծոյ ամեն խօսքովն »: Եւ արդարև Աստուծոյ արքայութեան խօսքն լսող ժողովուրդն՝ երբէք քաղց կամ ծարաւ չզգացին, թէ և երկար ճանապարհ եկած էին ոտքով. Բայց երբ աշակերտներն այսպէս հաց և կերակուր յիշեցին, արդէն քաղցեցան:

15. « Ասաց նոցա. որս որս է որոցս. որ որս են. և նոս ստացին. շինէ նիւնալի և երկու յինէ ստի բան լուսնի մը. բայց էլի՛ց գնան իբրևոր գնեն և որ ժողովուրդն բաւալան: 14. Գտնելի նիւն հաղարի լա՛ք արդիլի էին: Ասաց ուսիբորներան. նորեցոցե՛ր շարս որս որս յիսան յիսան: 15. Եւ այնպէ՛ս արին. ստին նորեցոցն »:

Աշակերտներուն խելքը չէր հասնէր, թէ ինչ պիտի անէր. Իսրայէլի ժողովրդեան անապատում կերած հացն ու միսն յիշողներ կլինէին անշուշտ, որ Երրայեցւոց ամենուն ականջներումն Սաղմոսներու տպաւորագոյն սքանչելիքներն էին: Բայց Փրկիչն կուսուցանէր, թէ Աստուծոյ արքայութիւնն ու արդարութիւնն խնդրեցէք նախ, և ուրիշ ամեն պիտոյք միասին կտրուի ձեզ: Աշակերտներն նստեցուցին ժողովուրդներն և հետաքրքրութեամբ կսպասէին՝ թէ ինչ պիտի տան ուտելու: Նոցա խորհուրդն այսպիսի ինչ էր « Երկու հարիւր դահեկանի հացն՝ բաւական չէ « դոցա, թէ և ամեն մէկն փոքր ինչ բան առնելու լինի... Այստեղ կայ « մի պատանի, որ հինգ հար գարիէ նկանակ ունի և երկու ձկներ. բայց « այն ի՞նչ պիտի լինի այդքան մարդկան համար ». (Յովհ. 2. 7. 9): Իսկ Փրկիչն կհրամայէ բերել այն հինգ նկանակներն ու երկու ձկներն:

16. « Եւ սոսս նիւն նիւնալիներն ու երկու յինէրն. երկնիս նալեցաւ. օրանեցի և իորեցի և իսորս ուսիբորներան՝ որ ժողովուրդն յիշեն »:

Այսչափ ինչ էր Փրկչին անելիքն. ո՛չ մանանայ իջեցուց, ոչ ծովէն լորամարզի գալ հրամայեց, այլ միայն երկինք նայեցաւ՝ Աստուծոյ արքայութիւնն խնդրեց այն ժողովրդեան վերայ, և հացին ու ձկներուն վերայ Աստուծոյ օրհնութիւնն կարդաց, կտրեց, տուաւ աշակերտներուն, որ ժողովրդեան ձգեն. Ի՞նչ տեսան արդեօք աշակերտներն. հացի բեկորներն կձգէին ամեն մի խումբ բաղմականներուն՝ որ յիսունական մարդ նստած

էին գրեթէ հարիւր դաս. հացի բեկորներն հասան ամեն բաղմահանի ամեն մի անհատին, և կուտէին, աշակերտներն կհիանան և կսթափուին, և կըհասկանան օրինաց խօսքն, թէ «Մարդ միայն հացով չսպրեր, այլ Աստուծոյ ամեն խօսքովն»:

16. «Կերան և կշտացան տէրն, և կտորներն նշխարներն վերդոցն ստանելիս ստանալն»:

Առաքելոց վարմանքն այստեղ ևս առաւել աւելի եղաւ. մինչդեռ կխորհէին, թէ երկու հարիւր դահեկանի հացն հաղիւ բաւական գայ այն ժողովուրդին՝ եթէ ամեն մէկն մի մի փոքր նշխար առնուն. և այժմ կտեսնեն, որ ամեն մինն մի մի փոքր նշխար աւելցուցել են. որոց ամենն երկոտասան սահառի կկեցնեն: Առաքեալներն գիտեն, որ իրենց մօտ միայն այն հինգ նկանակն կար. և այսչափ առատացաւ, աճեցաւ միայն Փրկչին երկինք նայելովն ու օրհնելովն. որով թէ իրենք առաքեալներն, և թէ ժողովուրդն իմացան, թէ Աստուծոյ ամեն խօսքին հաւատացողն կապրի, թէև առանց հացի և կերակուրի մնայ:

Առաքեալներն՝ այն բազմութեան հետ փորձուեցան այս ճշմարտութեան մէջ. մենք ևս նոցա հաւատովն հաւատանք, թէ Աստուծոյ խօսքովն է կեանք և կենդանութիւն նաև այս աշխարհում. հետեւինք Աստուծոյ խօսքերն ու օրհնքներն՝ ճշգիւ պահպանելու, նորա սահմանած ճշմարիտ բարոյականումն անխտոր գնանք, և տհա իսկոյն պիտի վերնան մեզմէն այն ամեն հակառակութիւններն՝ որ հացի խնդրով կծագին ամեն ընկերութեանց մէջ ամեն օր և ամեն ժամ. և պիտի վայելենք այն ժամանակ Փրկչին խոստոցած խաղաղութիւնն. անդորրութիւն հոգւոյ, և միութիւն անձերու: Չերկբայինք Աստուծոյ խօսքին ամենաբաւական զօրութեան վերայ, այլ հաւատանք միամտութեամբ, և կզօրանանք ամեն դիպուածներում. Պօղոս առաքեալ՝ իւր կրած վշտերու կարգումն կըթուէ, թէ շատ անգամ ծոմ է մնացել. Զայսինքն օրերով չէ կերել և չէ խմել, ու ապրել է Աստուծոյ խօսքին զօրութեամբ, ըստ որում Աստուծոյ ամեն խօսքն թագաւորեցնելու եռանդեամբ կշրջագայէր, նետեւինք և մենք Փրկչին սորվեցուցած և Առաքելոց ընդունած այս հաւատքին, և ապրենք աշխարհիս ամբաւ կռիւններէն:

18. «Եւ նորո՛ւ ստանիլն ազնիւի կենալու ժամանակն, աշակերտներն ևս նորոհեր էին. հարցումնեց զնոսաւ և առաց. «Վէ է կտակն իմ մասին՝ խոզով-բարդներն, թէ եղած լինի՞: 19. Եւ նորոս պարտախեան որոնն ու տոտցին, շնորհմանեա Մկրտիկ (կոմարէն), և որովչեմը շնորհոյ, ինչ մի մասն՝ թէ մի մարդարէ յարաբնին առաւորներն»:

Ինչպէս հողմերուն և ծովի ալիքներուն սաստած ժամանակն, նոյնպէս և այս հացի սքանչելեաց վերայ հիացած, կհարցնեն առաքեալներն, ո՞վ

պիտի լինի սա: Նոցա այս խորհուրդն հետազօտելով կհարցնէ Փրկիչն, թէ ժողովուրդն՝ զո՞վ կհամարին զնա, և թէ քարոզելու որ գնացին, ու ժողովրդոց մէջ եղան, նոքա՝ զո՞վ կկարծէին զՅիսուս: Առաքեալներն միամտութեամբ կպատասխանեն, ինչ որ լսել են ժողովուրդներու մէջ, ժողովրդոց այս կարծիքներն՝ Սուրբ Գրոց մարգարէականներուն տեղեկութիւն ունեցող և խորհողներու կարծիք է: Առաքելոց մէջ ևս կային այս համութիւնն ունեցող կամ գոնէ ի լրոյ տեղեկացողներ՝ թէ Մեսիայի գալտեան ժամանակն է. նորա առջևէն գալու Եղիային երևնալու ժամանակն է, Մովսէսի գուշակած մարգարէին գալու ժամանակն է, և այսպէս կըփնտռէին ոմանք. Անդրէաս՝ իւր եղբօրն կասէր. « Գտաք զՄեսիայն, որ թարգմանի Քրիստոսն » նոյնպէս և Փիլիպպոս կասէր Նաթանայէլին. « Զորմէ գրեաց Մովսէս յօրէնէն՝ և մարգարէքն, գտաք զՅիսուս զորդի Յովսեփայ ի Նազարեթէ: Այս խօսքերն՝ մարգարէից գուշակութեան ժամանակներն ընտրող մարգկան խօսքեր են: Աւետարանիչն ցոյց կուտայ, թէ Անդրէաս՝ Յովհաննէս Վկրտչի վկայութիւնն լսեց, և գնաց Յիսուսի ետևէն. իսկ զՓիլիպպոս կանչեց ինքն Յիսուս, ի հարկէ նորա հոգւոյն խնդիրն իմանալով. նոյնպէս և Նաթանայէլին համար կվկայէ Փրկիչն, թէ զՄեսիայն կփնտռէր. և այսպէս կասէ. « Մինչև էր Փիլիպպոսի կոչեցեալ զքեզ, զի էիր ի ներքոյ թղենւոյն՝ տեսի զքեզ »: Ի հարկէ Նաթանայէլ թղենւոյն ներքևն նստած մարգարէից Կրուածներն կքրքրէր, թէ ո՞ւր պիտի ծնի Քրիստոսն, կամ ո՞ւր պիտի յայտնուի, և ե՞րբ, Եթէ նա այս խորհրդումն եղող չլինէր, Փիլիպպոս այն խօսքն պիտի չասէր նորան, Արդ առաքեալներն՝ որ սկիզբէն ի վեր այսպէս հաւատացած էին, այն ինչ հարցու փորձ էր, որ յարուցին երբ ծովուն -աստեց, և այժմ ի՞նչ կխորհին իրենց մէջ՝ հացին սքանչելեաց վերայ, որոյ մասին սկսեց հարցնել Փրկիչն, և ժողովրդոց կարծիքն լսելէ ետքն՝ նոցա կարծիքն ևս կհարցնէ:

20. « Ասաց նոցա. որ ո՞ւր շտաբէ իմ անուն, ինչ է՞: Պատասխանեց Պետրոս, և ասաց. Աստուծոյ Քրիստոսն: 21. Եւ ասուցեց նոցա. և պատահեց ոչ ոքի չտեսիլ զայն »:

Առաքելոց խորհուրդն այսպէս իմանալէ ետքն, կարգելէ, որ ոչ որի չասեն զայն. այս սաստիկն ի հարկէ կզարմանային առաքեալներն. որոնք թերևս քարոզութեան գնացած ժամանակն՝ շատերուն ասել էին և թէ նորա անունովն այն բժշկութեան զօրութիւնն կկատարէին. « Առաքելոց այս տարակոյսն կփարատէ Յիսուս »:

22. « Եւ ասաց. Մարբոյ որդւոյն պէտէ շտաբ շտաբուել և անտրտուել աստուծոյն անունովն և ծերերէն և դպիրներէն. և սպանուել, և երբորդ օրոսն յարտենանան »:

Աշակերտներն՝ չեն համոզուիր, թէ Քրիստոս պիտի չարչարուի, ա-

նարգուի և սպանուի. ըստ որում ժողովրդեան ընդունելութիւնն կանսնէին, որ սիրով էր և հաւատով. և կկարծէին, թէ մի փառք պիտի տան ժողովուրդներն եթէ քարոզուի նոցա, թէ Սա է Քրիստոսն: Այլ Փլըրկիչն կհասկացնէ նոցա, թէ իւր փառքն՝ չարչարանքէն, մեռնելէն և յառնելէն ետքն պիտի կատարուի. նաև աւելցուց.

25. եւ մեռելն իմեր. եթէ մեռնի մեռնայ, ի՞մ երեւոյն քու. դիպի որոնայ. ի՞նչ անի, և միշտ որոնի ի՞նչ, և քու ի՞մ երեւոյն: 24. Վասն զի ի՞նչ անի մարտիկն ի՞նչ, դիպի ի՞նչ, և ո՞վ որ ինչ հարցնի ինչ, անի, պիտի քոնէ զայն:

Այսպէս կհասկացնէր, թէ Քրիստոսի փառքէն ետքն անգամ պիտի չարչարուին նորա աշակերաններն, և որոնք որ այս չարչարանքէն ազատ մնալ կամին, ինքզինքնին պիտի կորսնցնեն, յաւիտենական կեանքէն՝ Յիսուսի թագաւորութեան ամոռակցութենէն պիտի զրկուին. իսկ որոնք որ Յիսուսին համար վկայեն և այն վկայութեան վերայ չարչարանք և մահ յանձն առնուն, նոքա պիտի ժառանգեն յաւիտենական կեանքն:

25 « Ի՞նչ զոհարեմ է մի մարդու, եթէ զարգանի (ի՞նչ) շահի. և ի՞նչ հոգին ի՞նչ անի, ի՞մ որոնի: 26. Վասն զի ո՞վ որ զի՞նչ և ի՞մ ի՞նչ անի, հարցնուի ինչ, զի՞նչ որոնի. մարդու և ո՞րքէն դիպի ինչ, երբ որ քոնէ ի՞նչ զորոնովն. և շօր և որոնք հրէշտակներն զորոնովն »:

Առաքեալներն չէին կարողանար հասկանալ Յիսուսի կրեւիք չարչարանքն, անարգանքն, մահն, յարութիւնն և փառքն. մարդկօրէն կխորհէին, թէ չարչարանքով անարգանքով ու անուելէ ետքն՝ այլ ևս ի՞նչ փառք պիտի լինի. Յարութեան խորհուրդն չէին կարող հասկանալ. նայինի այրիի որդւոյն և Յայրոսի աղջկան յարութիւնն. կամ չէին մտաբերէր, կամ կհամարէին թէ նոքա մեռած չէին. կամ եթէ նոցա մեռած լինելն վկայող այնչափ բազմութեանն եթէ կհաւատային, գոնէ նոցա յարութենէն ետքն մի փառք չտեսնն նոցա վերայ, եթէ ոչ միայն տեսնող ու ըսող ժողովուրդները զարմացան, և նոքա՝ մեռնելէն յառաջ ինչ որ էին, դարձեալ նոյնն եղան: Այսպիսի մտքերով չէին կարողանար որոշակի ըմբռնել Աստուծոյ Քրիստոսին վստաւան, սյսիւքն յաւիտենից տերութիւնն, աշխարհի կատարածն, Աստուծոյ դատաստանն՝ զոր պիտի գատի բոլորանգակ մարդկային ազգն, թէ կենդանիներն և թէ ննջեցեալներն, որոնք պիտի յառնեն՝ երբ Քրիստոսի գալստեան ձայնն լսեն: Մանաւանդ որ առաքեալներն՝ Հրէից մէջ ընդհանուր եղած այն կարծիքն ևս ունէին, թէ Քրիստոսն երբ գայ, Դաւթի թագաւորութեան ամոռը պիտի հաստատէ. և այն թագաւորութիւնն անվստաւան պիտի լինի. այս մտքով ևս երբեմն կզիճէին, թէ Քրիստոսի թագաւորութիւնն որ սկսուի, նոցամէն

որն պիտի լինի մեծ, կամ որոնք պիտի նստեն նորա աջ ու ձախ կողմերն: Եւ այս արքայութիւնն՝ աշխարհիս թագաւորութեան կերպով միայն ըմբռնած էին. և երբ լսեցին Փրկչին վախճանի մասին, թէ չարչարանք, անարգանք և մահ է, խորհեցան որ գլուխնին հեռացնեն, և իրենց թագաւորութիւնն խոստացող մի Մեսիայ փնտռեն. կամ իրենք իսկ ազատեն իրենց ազգն՝ Հռովմայեցւոց գերութենէն, և ազատ կեանք տան ազգին: Առաքելոց այս խորհրդոյն ունայնութիւնն կ'յայտնէ Փրկիչն. ասելով, թէ ի՞նչ օգուտ է մարդուն, որ աշխարհն շահի և ինքզինքն կորսնցնէ, կամ տուժէ. և զայս ասելով մեռելոց յարութիւնն և յարութենէն ետքն եղած յաւիտենական իեանքն կակնարկէր: Բայց առաքեալներն դարձեալ չէին կարողանար հասկանալ, թէ Քրիստոս մեռնելէն ետքն ինչպէս կարող է թագաւորել: Ըստորում նոքա սոսկ մարդ կհամարէին զՔրիստոս. և չէին յիշել Էմմանուէլի--Մարգացեալ Աստուծոյ մասին եղած մարգարէութիւնն: Զոր յիշեցնելու կերպով ամեն մեռելներու յարութենէն ետքն Քրիստոսի գալուստն ասելէ ետքն՝ կխոստանայ ցոյց տալ նոցա իւր արքայութեան փառքն:

28. «Եւ այն իբրև կամով յեղ ինչ որոշուին՝ որ այդ որեւէ կեցել են՝ մի ասին կա՛ն, որ մեզ պիտի շնորհին, փնչն որ Աստուծոյ որոշուինն արեւին»:

Առաքեալներն հանդարտեցան այլևս, և սպասեցին, որ իւրեանց ընկերներէն մի քանին տեսնեն Աստուծոյ արքայութիւնն. և իւրեանց պատմեն Փրկիչն՝ իւր այս խոստումն կատարեց շուտով. նշանակած աշակերտներէն երեքին ներկայութեամբն՝ իւր աստուածութեան փառաց այս կերպ յայտնութիւնն Աստուծոյն՝ անունով յայտնի է քրիստոնէսայ եկեղեցւոյն:

Կատարեալ հաւատով դիմենք առ Աստուած, որ իւր հոգւով լուսաւորուած, հասու լինինք Փրկչին Շնորհացն Մարգեղութեան խորհրդոյն մէջ ծածկուած մարգասիրութեանն և ամենողորմ Աստուածութեանն ու փառացն. և արժանի լինինք նորա յաւիտենից արքայութեանն:

Կ. Վ. ՍՐԸՊԵԱՆ.

14 Յուլիսի 1891.